

**ՀԱՅ-ԱՂԻՐԵՋԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՂԻՐԵՋԱՆԱԿԱՆ և ՀԱՅԿԱԿԱՆ
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԿԱՅՔԵՐՈՒՄ (ՄԻՆՉ ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ)***

Մարինե Գևորգյան

Բանալի բառեր` հայ-աղբբեջանական հակամարտություն, Լեռնային Ղարաբաղ, լրատվական կայքեր, համացանց, Խոջալու, թյուր տեղեկատվություն, պատմական կեղծիք, ազրեսիա, տարածքային ամբողջականություն, ազգերի ինքնորոշման իրավունք:

Հայ-աղբբեջանական հակամարտությունն ավելի քան հարյուրամյա պատմություն ունի: Հակամարտությունը միշտ ուղեկցվել է հոգեբանական և քարոզչական ճնշումներով: Տարիների ընթացքում մշակված քարոզչական ապարատն այսօր էլ որպես զենք օգտագործվում է հայ-աղբբեջանական հակամարտության տեղեկատվական, հոգեբանական և գաղափարախոսական ճակատներում:

Մեր օրերի քարոզչական մեքենաներից մեկը համարվում է համացանցը, որը դարձել է արցախյան հակամարտության մի մասնիկը: Ինչպես հայտնի է, Հայաստանն ու Աղբբեջանը Լեռնային Ղարաբաղի համար մղում են ոչ միայն քաղաքական, այլև տեղեկատվական պատերազմ, որն օրեցօր թեժանում է: Սա պայմանավորված է ինչպես դրավարման մեթոդների բազմազանությամբ, այնպես էլ հակամարտության երկու կողմերի՝ պատերազմի այդ բաղադրիչի կարևորության ընկալմամբ:

Գաղտնիք չէ, որ աղբբեջանական կողմն արդեն բավական երկար ժամանակ փոխում է ինչպես Հայաստանի, այնպես էլ ընդհանրապես հայության դեմ ուղղված տեղեկատվական պատերազմի վարման մեթոդները: Մասնավորապես, ընթանում է տեղեկատվական դաշտի համակարգում, տեղեկատվական հակամարտության կենտրոնների գործունեության դեկավարման գործում պետության դերի ուժեղացում: Հարկ է նշել, որ արժևորվում է նաև համացանցի դերը, քանի որ այն ամենամեծ ծավալի տեղեկություններ տարածելու հնարավորություն է տալիս [1]: Աղբբեջանական պետական քարոզչամեքենան, նախագահ Իլիամ Ալիևի գլխավորությամբ և հովանավորությամբ, չի խնայում ո՛չ նյութական և ո՛չ մարդկային ռեսուրսներ համացանցում հակահայկական քարոզչություն իրականացնելու համար:

Սույն հոդվածում ուսումնասիրել ենք **աղբբեջանական և հայկական** լրատվական մի քանի կայքեր՝ վեր հանելու հակահայկական քարոզչության էությունը և դրան տրվող համարժեք պատասխանները: Ուսումնասիրության առարկա ենք դարձրել www.day.az, azerbaijan.az, armenia.az աղբբեջանական և www.news.am, www.panorama.am հայկական կայքերը: Սրանցից առաջինը՝ www.day.az-ը, ըստ who.is տեղեկատուի, համացանցում հայտնվել է 1995 թվականի փետրվարի 1-ին: Կայքի հիմնական լեզուն ռուսերենն է, սակայն առկա են նաև աղբբեջանալեզու նյութեր: Հիմնականում ուսումնասիրություն ենք կատարել www.day.az կայքի «Քաղաքականություն» (Политика) բաժնում: Այստեղ գետեղված նյութերը, որոնք առնչվում են Հայաստանին կամ արցախյան հակամարտությանը, ունեն շեշտված հակահայկական բնույթ և աչքի են ընկնում պատմական կեղծիքներով:

Day.az կայքի «Քաղաքականություն» (Политика) բաժնում ականատես ենք եղել 08.10.2013-ին ներկայացված *Армения продолжает морочить голову США* («Հայաստանը շարունակում է ցավեցնել ԱՄՆ-ի գլուխը») վերտառությամբ նյութին: Նյութում ասվում է. «Սեպտեմբերի 30-ին ԱՄՆ-ի Մերիլենդ նահանգի նահանգապետ Մարտին Օմե-

* Հոդվածն ընդունվել է 30.11.17:

Հոդվածը տպագրության է երաշխավորել պ.գ.դ., պրոֆեսոր Է.Մինասյան:

լեյր ստորագրել է շնորհավորական հռչակագիր Հայաստանի «անկախության» կապակցությամբ: Հայաստանի «անկախությունը» միակ սուտը չէ, որով ԱՄՆ-ի հայկական Սփյուռքը մթազնել է Մերիլեյնդի բարեհոգի նահանգապետի աչքերը: Արդեն հռչակագրի երկրորդ տողում ասվում է, որ Հայաստանը հանդիսանում է առաջին ազգը, որը 301 թվականին ընդունել է քրիստոնեությունը: Ինչպես գիտենք, 301 թվականին անկախ Հայաստան գոյություն չուներ: Տարածքները գտնվել են վասալական տիրապետության տակ և թագավորել է Տրդատ III-ը, պարթևական տոհմից: Եդեսիայից հետո և մինչև Հայաստանը կրնդուներ քրիստոնեությունը, որպես պետական կրոն, ընդունվել է էրիթրեայում, Եթովպիայում, Կովկասյան Ալբանիայում (Ադրբեջան) և Իբերիայում (Վրաստան): Այնպես, որ հայերին չէր խանգարի լավագույն դեպքում դադարեցնել ցավեցնել աշխարհի գլուխը և դրա փոխարեն հերթ կանգնել լավագույն դեպքում վեցերորդը լինելու համար: Մարտին Օմելեյի չարաբաստիկ հռչակագրում ասվում է, որ 1991 թվականի սեպտեմբերի 21-ին Հայաստանը հռչակվեց հանրապետություն և անկախացավ Խորհրդային Միությունից: Հայ լոբբիստները այնքան անգրագետ են, որ նույնիսկ չգիտեն իրենց պատմությունը: 1991 թվականի սեպտեմբերի 21-ը ոչ թե անկախության օրն է, այլ հանրաքվեի անցկացման օրը: Հայաստանի անկախությունը հռչակվեց հանրաքվեից երկու օր հետո՝ սեպտեմբերի 23-ին: Իսկ անկախության հռչակագիրը Հայաստանի ԳԽ-ն ընդունել էր 1990 թվականի օգոստոսի 23-ին, որը նույնպես հայերին չի տալիս որևէ առաջնություն այս դեպքում: Այսքան անճշտություններ մի փոքրիկ փաստաթղթում» [2]:

Այն ամենն, ինչը ասվում է day.az կայքի նշված նյութում, ոչ մի ընդհանրություն չունի իրականության հետ: 1990 թվականի օգոստոսի 23-ին ընդունված Հայաստանի անկախության հռչակագիրը ոչ միայն իր անկախ պետությունը վերականգնելու, հայ ժողովրդի դարավոր երազանքի արտահայտումն էր, այլ նրա երկու հատվածների՝ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի միավորման փաստացի իրողությանը իրավական տեսք տալու փորձը, ուստի միանգամայն հասկանալի է ադրբեջանական հիստերիան այս հարցի կապակցությամբ: 1990 թվականի օգոստոսի 23-ին ընդունված Հայաստանի անկախության հռչակագիրը և նրա հաջորդած իրավական ակտերը՝ 1991 թ. սեպտեմբերի 2-ի Լեռնային Ղարաբաղի անկախության հռչակագիրը, ապա և 1991 թվականի սեպտեմբերի 23-ի ՀՀ անկախության մասին պատմական որոշումները վկայում են, որ ադրբեջանական դիվանագիտության «զլխավոր խաղաթուղթ» դարձած «տարածքային ամբողջականության սկզբունքը» պարզ խաբեություն է:

Ինչ վերաբերվում է 301 թվականին Հայաստանում քրիստոնեության որպես պետական կրոնի ընդունման վերաբերյալ ադրբեջանական կողմի կասկածներին, ապա վաղուց գիտության մեջ փաստերով հիմնավորված է Հայաստանում 301 թ.-ին քրիստոնեության պետական կրոն ընդունված լինելու հանգամանքը: Անդրադառնանք այդ փաստերից մի քանիսին:

Քրիստոնեությունը հայերի կողմից առաջինը պետականորեն ճանաչելու մասին վկայում է 4-րդ դարի եկեղեցական պատմիչ Եվսեբիոս Կեսարացին: Նա հիշատակում է, որ Հռոմի կայսր Մաքսիմիանոս Դայան (305-313 թթ.) արշավում է «ընդդեմ Հայոց, որք ի սկզբանէ անտիբարեկամք եւ մարտակիցք էին Հռոմոց. զորս քրիստոնեայս եւ յերկրպագութիւն ծշմարտին Աստուծոյ փոյթս նեղելով բռնաւորին ատելւոյն Աստուծոյ՝ զի կռոց եւ դիւաց զոհեցնեալ...» [3]:

Հայերի կողմից քրիստոնեությունն առաջինը ճանաչելու փաստը, ըստ Դ. Մանանդյանի, հավաստում է 5-րդ դարի բյուզանդացի եկեղեցական պատմագիր Սոզոմենոսը. «Ես տեղեկացա... որ հայերն ընդունել են քրիստոնությունն ավելի առաջ [քան վրացիներն ու ուրիշները]» [4]: Կիմական բնագրեր կան, որոնք ևս փաստում են Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 301 թվականը: Դրանցից մեկն է Անիի Մայր տաճարի 1001 թ. արձանագրությունն է [5], որում մասնագետները հստակ կարդացել են 301 թվականը:

Բացի այդ ամենը, համաձայն բազում վկայությունների և հայ եկեղեցական ավանդույթի, դեռ I դարում Ս.Բարդուղիմեոս և Ս.Թադեոս առաքյալները Հայաստանում քարոզել են քրիստոնեական ուսմունքը և հիմնադրել Հայ եկեղեցին, ինչի շնորհիվ էլ դարերի ընթացքում այն սրբորեն պահպանել է իր Առաքելական կարգավիճակն ու անվանումը: Մինչ Հայաստանի համընդհանուր մկրտությունը՝ 301 թվականը, այստեղ արդեն գոյություն ունեին քրիստոնեական համայնքներ և երկու եպիսկոպոսական աթոռ: Սա նույնպես բավական ծանրակշիռ փաստարկ է այն մասին, թե ինչպես ստացվեց, որ աշխարհում առաջինը քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունվեց հենց Հայաստանում: 301 թվականին Գրիգոր Պարթևը, Կեսարիայից Բագավան գալով, Եփրատ գետում մկրտեց հայոց Տրդատ III Արշակունուն և նրա ընտանիքին, հայոց բանակը և հասարակ ժողովրդին: Սրանք անհերքելի փաստեր են, սրանք հայ ժողովրդի պատմական անցյալի անբաժանելի իրադարձություններն են, իրադարձություններ, որոնք չէին կարող տեղ գտնել ընդամենը մոտ 100 տարվա պատմություն ունեցող մեր ազրեսիվ հարևան Ադրբեջանի պատմության մեջ: Թերևս համաշխարհային քաղաքակրթության մեջ իր տեղը չգտած, որևէ կրոնական կամ մշակութային ավանդ չունեցող Ադրբեջանի ներկա սերնդի «պատմաբանների» ու «լրագրողների» համար դա հոգեբանական բարդույթների ձեռքբերման գլխավոր պատճառներից է:

Անդրադառնանք azerbaijan.az կայքում տեղ գտած «Խոջալուի ցեղասպանություն. 20-րդ դարի ողբերգությունը» վերտառությամբ հոդվածին [6]: Հոդվածում կարդում ենք. «Հայկական պետությունը, ի հեճուկս բոլոր միջազգային չափանիշների, փորձում է իրեն բռնակցել Լեռնային Ղարաբաղը, ընդ որում այդ ճանապարհին իրականացնելով հանցագործություններ և գազանություններ: Խոջալուի ցեղասպանությունը հայերի ազրեսիվ քաղաքականության հետևանք է: 1992 թ. փետրվարի 26-ին հայկական զինված ստորաբաժանումները 7 հազար բնակչություն ունեցող Խոջալու քաղաքում իրականացրին ցեղասպանություն» [7]:

Այն, ինչ ադրբեջանական կայքերում հորջորջվում է որպես «Խոջալուի ցեղասպանություն», և այդ կապակցությամբ ակցիաներ են կատարվում ի պաշտպանություն Խոջալուում «զոհված անմեղ ադրբեջանցիների», իրական ծիծաղ է առաջացնում: Սկսված ազգամիջյան կռիվներում դեռևս 1992 թ. սկզբից ադրբեջանական կողմը ռմբակոծում էր Ստեփանակերտը հրթիռային կայանքներից: Միայն փետրվարի 19-ին ԼՂՀ մայրաքաղաքի վրա արձակվել էր 300 հրթիռ [8]: Ստեփանակերտի համար ամենավտանգավորը Խոջալուն էր, որը փակում էր Ստեփանակերտ-Ասկերան մայրուղին: 1992 թ. փետրվարի 15-ին հայկական ինքնապաշտպանական ուժերը դիրքավորվել էին Խոջալուի արևմտյան մասի երկարությամբ՝ պահանջելով ադրբեջանցիներից թողնել և հեռանալ: Ի պատասխան հակառակորդը նորից ռմբակոծել էր Ստեփանակերտը: Այդ պահին Ադրբեջանում ձգտում էին տապալել Ս. Մութալիբովին, ուստի հակառակորդը ձգտում էր Խոջալուն հանձնելով՝ դրա մեղավոր հռչակել Մութալիբովին ու զրկել նրան իշխանությունից: Խոջալուի կրակակետերը լռեցնելու համար 1992 թվականի փետրվարի 25-26-ին հայկական զորաջոկատները Աշոտ Ղուլյանի (Բեկոր) գլխավորությամբ հետ շարտեցին ադրբեջանական ուժերին [9], ապա հայկական կողմը միջանցք թողեց Խոջալուի հայ բնակչության ապահով նահանջն ապահովելու համար, մինչդեռ նույն այդ ժամանակ իշխանությունը զրավելու նպատակով Ադրբեջանի ազգային ծակատի կողմից իրականացվեց Խոջալուի խաղաղ բնակչության կոտորածը (400-2000 զոհ), որի մեղքը մինչ օրս ադրբեջանցիները փորձում են բարդել հայկական կողմի վրա:

Մի բան ակնհայտ է. ադրբեջանական դիվանագիտությունն ու լրբքին շարունակում են ապակողմնորոշել միջազգային հանրությանը և Ադրբեջանի ժողովրդին կեղծելով դարաբաղյան հակամարտության էությունն ու պատմությունը, և մասնավորապես, Խոջալուի իրադարձությունները: Կեղծելով Խոջալուի իրադարձությունները՝ Ադրբեջանի վարչակարգը փորձում է խուսափել Սուլեյմանլիյեի, Բաքվում, Կիրովաբադում, Մարաղայում իրականացված հայկական ջարդերի և Խոջալուում իր իսկ ժողովրդի դեմ

իրագործած ոճրագործության պատասխանատվությունից: Խոջալուի բնակիչները դարձել են իշխանության համար մղված կատաղի ներքաղաքական պայքարի զոհ:

Շարունակելով մեր հետազոտությունը՝ անդրադառնանք լրատվական կայքերից հաջորդին www.armenia.az-ին: Կայքը հայերեն է, որը ստեղծված է եղել Ադրբեջանի կառավարության պատվերով՝ երկրի իբր թե «իրական» լուրերը հայերի մեջ տարածելու համար: Նախածեռնության հեղինակը news.az կայքի նախագահ, հայտնի լրագրող և խմբագիր Էլնուր Բախմովն է: Կայքը գործում է բացառապես հայերեն: Այնտեղ ընթերցողը կարող է գտնել Ադրբեջանի վերաբերյալ ամենաթարմ նորությունները, հարցազրույցներ փորձագետների հետ, վերլուծական հոդվածներ:

Հայ-ադրբեջանական հակամարտության համատեքստում վերոհիշյալ կայքում հանդիպեցինք «Քաղաքականություն» բաժնում տեղակայված «Հայերը պետք է գիտենան, որ առանց Ադրբեջանի՝ Լեռնային Ղարաբաղը չի կարող ապագա ունենալ» հոդվածին [10]:

Նյութում ասվում էր. «Ադրբեջանի ԱԳՆ-ի մամլո ծառայության ղեկավար Էլմար Աբդուլլահի խոսքերով՝ ղարաբաղյան խնդրի շուրջ բանակցություններում խնդիր է ստեղծում այն հանգամանքը, որ այսօր Ադրբեջանի հետ բանակցություններում հայկական կողմի մոտ չկա կոնկրետ դիրքորոշում: Խնդիրն այն է, որ Հայաստանը բանակցություններում խուսափում է անհրաժեշտ ուղղությունից: Հայաստանի ղեկավարությունը հստակ գիտակցում է, որ վաղ թե ուշ Ադրբեջանի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը կվերականգնվի: Ուղղակի Հայաստանի ներկայիս ղեկավարությունը չի մտածում վաղվա օրվա մասին: Էլման Աբդուլահի խոսքով, Հայաստանը խուճապի մեջ է» [11]:

Այժմ խոսենք իրականության մասին՝ փաստերով: «Իրելի» հասարակական միավորման կողմից կազմակերպված «Երիտասարդ առաջնորդների ծնեռային համալսարան»-ի շրջանակներում Ղարաբաղյան խնդրի շուրջ բանակցությունների նպատակն այն է, որ ադրբեջանցի երիտասարդների ուղեղները ներարկեն այն տեղեկությամբ, որ Ղարաբաղյան խնդրի շուրջ հայկական կողմը նույնիսկ չունի կոնկրետ դիրքորոշում: Իրականությունը խիստ տարբերվում է հասարակական միավորման ոչ փաստացի տեղեկատվությունից:

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի առնչությամբ Հայաստանը ունի կոնկրետ դիրքորոշում, որն ամրագրված է ՀՀ ԱԳՆ պաշտոնական փաստաթղթերում: Ըստ այդմ Հայաստանը համոզված է, որ հակամարտության կարգավորումը պետք է հիմնված լինի որոշ սկզբունքների վրա: Այդ սկզբունքներն են՝

Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հիմք պետք է հանդիսանա Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրականացման ճանաչումը,

Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ պետք է ունենա հայկական կողմի իրավագործության տակ գտնվող անխափան ցամաքային կապ,

Լեռնային Ղարաբաղի անվտանգությունը պետք է միջազգայնորեն երաշխավորված լինի:

Այս սկզբունքների ընդունումն ու պայմանագրային ամրագրումը հնարավորություն կընձեռի հասնել հիմնախնդրի համալիր կարգավորմանը: Հայաստանը կարևորում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությունը՝ որպես բանակցային գործընթացի գործուն ձևաչափ, որը կարգավորման ուղիներ գտնելու բավականաչափ ներուժ ունի: Հայաստանը հետամուտ է խնդրի կարգավորմանը միայն խաղաղ ճանապարհով: Ադրբեջանի փորձերը ուժի սպառնալիքով կորզելու միակողմանի զիջումներ, ոչ միայն ի սկզբանե դատապարտված են ձախողման (այդ ցույց տվեց նաև Ադրբեջանի կողմից սանձազերծված 2016 թ. քառօրյա պատերազմը-Մ.Գ.), այլև շարունակում են մնալ փոխզիջումային տարբերակով խնդրի կարգավորման հիմնական խոչընդոտը: Ադրբե-

ջանը չի ունեցել և ներկայումս էլ չունի Լեռնային Ղարաբաղի նկատմամբ հավակնութ-
յունների ո՛չ քաղաքական, ոչ իրավական, ո՛չ էլ բարոյական հիմքեր [12]:

Հայկական լրատվական կայքերը մեկը, որում ուսումնասիրություն ենք կատա-
րել, www.news.am կայքն է: Կայքը, ըստ who.is տեղեկատուի, համացանցում հայտն-
վել է 2011 թվականի փետրվարի 2-ին: Կայքը գրանցված է Երևանում: Կայքի նյութե-
րից մեկը, որը շարժեց մեր հետաքրքրությունը, վերնագրված էր «Ադրբեջանական դի-
վանագիտության և լոբբիստական ջանքերի հերթական տապալումը Վաշինգտոնում»
[13]: Հոդվածում կարդում ենք այն մասին, որ. «Ի պատասխան ադրբեջանական պե-
տական քարոզչամեթոդների՝ Սպիտակ տան պաշտոնական կայքէջի իրականացված
ստորագրահավաքների՝ կորզելու ԱՄՆ նախագահի պաշտոնական հայտարարությու-
նը հոռջալուի դեպքերի ադրբեջանական վարկածի և ԼՂ հակամարտության կապակ-
ցությամբ՝ այսօր հրապարակվել է Սպիտակ տան պատասխանը, որն, ըստ էության,
ազդարարել է ադրբեջանցիների հերթական ջախջախիչ պարտությունը: Թեև գործի
դրված հսկայական գումարներին և կազմակերպչական միջոցներին, պետության ան-
միջական ներգրավվածությանը, ադրբեջանական բարձրաստիճան պաշտոնյաների,
դիվանագետների, լոբբիստների բազմաթիվ ամպագոռգոռ հայտարարություններին,
ելույթներին ու ակնկալիքներին, Սպիտակ տունն ընդգծեց, որ որևէ նախագահական
հայտարարություն չի լինելու և փաստորեն կոչ արեց կողմերին ջանքերը կենտրո-
նացնել հարցի խաղաղ կարգավորման վրա: Հարկ է նշել, որ պատասխանը բացահայ-
տորեն անտեսում է հոռջալուի վերաբերյալ ադրբեջանական խնդրագիրը: Փաստորեն
սա հակահարված էր ոչ միայն իրականացված ստորագրահավաքին, այլև ցույց է
տալիս այս օրերին Սիացյալ Նահանգներում հոռջալուի դեպքերը վերանայելու ուղ-
ղությամբ ադրբեջանցիների կողմից միլիոնավոր նավթադուլարներով իրականացվող
քարոզչական պատերազմի սնանկությունը» [14]:

Ըստ էության, եթե համեմատենք մեր կողմից քննարկված ադրբեջանական
08.10.13-ին Day.az կայքի «Քաղաքականություն» բաժնի «Հայաստանը շարունակում
է ցավեցնել ԱՄՆ-ի գլուխը» (*Армения продолжает морочить голову США*) նյութը և
հայկական վերոհիշյալ հոդվածը, կհասկանանք, որ ադրբեջանական նյութի այդ տե-
սակ մեկնաբանությունը բխում է Վաշինգտոնում ադրբեջանական դիվանագիտու-
թյան և լոբբիստական ջանքերի տապալումից, ինչը արձանագրվել էր հայկական այս
հոդվածում: Ըստ էության, պարզ է դառնում, որ ադրբեջանցիները, չունենալով ոչ մի
ճշգրիտ գիտական տեղեկություն, միևնույն հոդվածում անդրադառնում են թե՛ Հա-
յաստանում քրիստոնեության ընդունմանը և թե՛ ՀՀ անկախության հռչակմանը՝ դա
կատարելով ակնհայտ ճշմարտությունները կասկածի տակ առնելու ձևով: Ի հեծուկս
դրան՝ հայկական նյութի էական առավելությունը կայանում է զուտ պատմական
ճշմարտությունների մատնանշմամբ, հայ հեղինակը չի զբաղվել մտքի թռիչքով կամ
հակառակորդ ազգի պատկերի երևակայական խեղմամբ: Հայկական նյութում արձա-
նագրված են փաստեր՝ դրանց արդյունքում կատարված հետևությունները և ադրբե-
ջանցիների մասին որակավորումը թողնելով ընթերցողներին:

Հաջորդը, որն ուսումնասիրել ենք, www.panorama.am լրատվական կայքն է:
Անդրադարձանք վերոհիշյալ կայքի «Քաղաքականություն» բաժնի՝ «Ս.Մինասյան.
ԼՂՀ անկախության իրավական հիմքերն ավելի ուժեղ են, քան շատ այլ կիսաճանաչ-
ված կամ ծանաչված երկրներում» վերնագրով նյութին [15]: Նյութում ասվում էր.
«Ստատուս քվոն այնքան իրական է ու այնքան դժվար այն փոխել, այս տարվա ըն-
թացքում բազմիցս տեսանք, որ փորձեր արվեցին ստեղծված ֆորմատը փոխել, բայց
դա անհնարին է: Բանակցային գործընթացի տրամաբանության հետևում կանգնած
են առնվազն երեք միջուկային երկրների համանախագահներ, որոնք ունեն սեփա-
կան շահերը տարածաշրջանում և մյուս կողմից ստեղծված իրավիճակի ու ստատուս
քվոյի հետևում կանգնած են Հայաստանի իրական ռազմական և ռազմատեխնիկա-
կան բալանսը Լեռնային Ղարաբաղ Ադրբեջան եռանկյունում, որը մույնպես հնարա-

վորություն չի տալիս ոչ ներքին, ոչ արտաքին ուժերին որևէ ձևով խախտել այն ֆորմատը, որ գործում է արդեն երկու տասնամյակ: Անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի 20-ամյա անկախությանը, Ս.Մինասյանը շեշտեց՝ ԼՂՀ անկախության իրավական հիմքերն ավելի ուժեղ են, քան շատ և շատ այլ կիսաճանաչված կամ ճանաչված երկրներում: Լինի դա Կոսովոն, Աբխազիան կամ Չարավային Օսեթիան կամ այլ, համեմատության մեջ Ղարաբաղն ունի միզուցե ավելի ամուր իրավական դաշտ: Բայց մենք հասկանում ենք, որ Ղարաբաղյան կոնֆլիկտը ոչ միայն իրավական, այլ էթնիկ քաղաքական ու միջազգային կոնֆլիկտ է, որտեղ իրավական մասն ունի մեծ նշանակություն, բայց ավելի կարևոր և ակտուալ են ռազմական ու քաղաքական գործոնները» [16]:

Համեմատելով ադրբեջանական Armenia.az կայքի՝ «Հայերը պետք է գիտենան, որ առանց Ադրբեջանի՝ Լեռնային Ղարաբաղը չի կարող ապագա ունենալ» նյութը հայկական վերոհիշյալ նյութի հետ՝ ևս մեկ անգամ հստակ տեսնում ենք, որ ադրբեջանական «Իրելի» հասարակական միավորման տվյալ նյութը չի համապատասխանում իրականությանը: Մասնավորապես ասվածի վառ ապացույցն է հակառակորդի տվյալ հոդվածում տեղ գտած արտահայտությունը, որ «□ղարաբաղյան խնդրի հարցում Ադրբեջանի հետ բանակցություններում հայկական կողմի մոտ չկա հստակ դիրքորոշում»: Չնայած նրան, որ վերևում մենք հստակ մատնանշեցինք հայկական կողմի պաշտոնական դիրքորոշումը հակամարտության առնչությամբ, սակայն այստեղ ևս հարկ ենք համարում խնդիր ներկայացնել համեմատության մեջ: Հայկական նյութի հետ համեմատությունը հստակ պատկերացնել է տալիս, որ հայկական կողմը Ղարաբաղյան հարցի կարգավորման գոնե այդ փուլում ընդունելի էր համարում ստատուս քվոն: Դա իր հերթին նշանակում է, որ հայկական նյութում առկա հետևյալ լուսաբանումը «բանակցային գործընթացի տրամաբանության հետևում կանգնած են առնվազն երեք միջուկային երկրների համաձայնագրահներ, որոնք ունեն սեփական շահերը տարածաշրջանում և մյուս կողմից ստեղծված իրավիճակի ու ստատուս քվոյի հետևում կանգնած են Հայաստանի իրական ռազմական և ռազմատեխնիկական բալանսը Լեռնային Ղարաբաղ Ադրբեջան եռանկյունում, որը նույնպես հնարավորություն չի տալիս ոչ ներքին, ոչ արտաքին ուժերին որևէ ձևով խախտել այն ֆորմատը, որ գործում է արդեն երկրորդ տասնամյակ» [17] լիովին բխում է պատմական իրականությունից, այն նպատակ չունի սեփական հասարակությանն ու սեփական երիտասարդների ուղեղները լվանալ, ընդ որում դա անելով թշնամու նսենացման ֆոնի ներքո, ինչն ադրբեջանական նյութերի անբաժան ձեռագիրն է: Այ հենց ադրբեջանական լրատվական կայքերի հոդվածներից է պարզ դառնում, թե հարևան ազգի հանդեպ ինչ թշնամական տրամադրություններով լեցուն սերունդ են դաստիարակում՝ չզլանալով դրանում ներգրավել ինչ-որ ձեռնային համալսարանի «ուսումնաստեճ» երիտասարդների: Հայկական լրատվական կայքի՝ մեր կողմից մեջբերված տվյալ հոդվածում հստակ ընդգծված է, որ ղարաբաղյան հակամարտությունը քաղաքական կոնֆլիկտից լինելուց բացի, ունի նաև էթնիկ հիմք, սակայն այդ ամենով հանդերձ հեղինակը ձեռնպահ է մնում հակառակորդի նկատմամբ որևէ կեղծ կամ ստորացուցիչ կարծիք հայտնելուց:

Ամփոփելով ադրբեջանական և հայկական լրատվական կայքերում ղարաբաղյան հակամարտության ներկայացվածության մի քանի դրվագներ, մենք եկանք մի շարք եզրահանգումների, մասնավորապես.

Ա. Ղարաբաղյան հիմնախնդրում ադրբեջանական բոլոր լրատվական կայքերը միմյանց հետ խիստ փոխկապակցված են և աշխատում են միևնույն սկզբունքով, նույն հոգեբանությամբ և նույն նպատակներով: Նրանց նպատակների մեջ է մտնում համաշխարհային հանրությանը մեղմ ասած թյուր տեղեկատվության հաղորդումը հիմնախնդրի վերաբերյալ:

Բ. Ադրբեջանական կայքերը փորձում են տպավորություն ստեղծել, թե ադրբեջանական ազգը ղարաբաղյան հակամարտության մեջ գոի է հանդիսանում: Բաքվի հակահայկական ջղածգումը հենվում է Ադրբեջանի տարածքային ամբողջականության

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

պահանջի վրա, մինչդեռ նրանք մոռանում են միջազգային իրավունքի մեկ այլ սկզբունքի՝ ազգերի ինքնորոշման մասին:

9. Հայկական կայքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայկական նյութերն հոգեբանական և բարոյական մակարդակներում զերծ են ազդեցիկացից և աչքի են ընկնում հարևան ազգի հանդեպ զսպվածությամբ: Ղա, իհարկե, չի նշանակում, թե հայկական կայքերում չկան ադրբեջանական խեղաթյուրումներին ուղղված պատասխաններ:

Դ. Հայկական լրատվական կայքերը ճշգրտված տեղեկատվություն են ներկայացնում հակամարտության այս կամ այն ասպեկտի վերաբերյալ: Հայկական նյութերը բացի հավաստի լինելուց, իրենց մեջ չեն պարունակում անմարդկային տեսարանների ներկայացում և զերծ են մատաղ սերնդի մեջ ատելություն սերմանելուց, ինչպես նաև էժանագին մանիպուլյացիաների կիրառումից:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գևորգյան Ս., Տեղեկատվական պատերազմի և տեղեկատվական անվտանգության խնդիրները ՀՀ ազգային անվտանգության համատեքստում, Актуальные научные исследования в современном мире. 2016, Выпуск 11, част 2, стр. 25-30.
2. Армения продолжает морочить голову США -<http://news.day.az/politics/435762.html>, (06.02.2018 թ. դրությամբ հասանելի էր):
3. Եւսեբիոսի Կեսարացւոյ Պատմքին եկեղեցւոյե, յեղեալ յաւորւոյն ի հայ ի հինգերորդ դար պարզաբանեալ նոր թարգմանթեամբ ի յոյն բնագրէն ի ծեռն Հ. Աբրահամ վ.ճարեան ի Մխիթարեանց, ի Վենետիկ, 1877, էջ 688:
4. Մանանդյան Հ., Երկեր, հ. Բ., Եր., 1978, էջ 130:
5. Մանուչարյան Ա., Հայոց դարձի՝ 301 թվականը հաստատող մատենագրական և վիմագրական վկայություններ, «Էջմիածին», օգոստոս, 2017, էջ 44:
6. http://azerbaijan.az/portal/Karabakh/Genocide/genocide_r.html (06.02.2018 թ. դրությամբ հասանելի էր):
7. Նույն տեղում, վերջին մուտք 06.02.2018:
8. Խաչատրյան Հ., Ղազարյան Գ., Մարգարյան Ս., Հաղթանակներն ինչպես եղել են, «Ազգականչ 44», Եր., 2008, էջ 23-24:
9. Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, Եր., 2012, էջ 51:
10. Հայերը պետք է գիտենան, որ առանց Ադրբեջանի՝ Լեռնային Ղարաբաղը չի կարող ապագա ունենալ - <http://www.armenia.az/articles/politics/25344>, (06.02.2018 թ. դրությամբ հասանելի էր):
11. Նույն տեղում:
12. Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի առնչությամբ Հայաստանի դիրքորոշումը, <http://mfa.am/hy/artsakh-issue/#a5>
13. Ադրբեջանական դիվանագիտության և լրբբիստական ջանքերի հերթական տապալումը Վաշինգտոնում, 26.03.2013, <http://news.am/arm/news/142007.html>, (06.02.2018 թ. դրությամբ հասանելի էր):
14. Նույն տեղում:
15. Մինասյան Ս., ԼՂՀ անկախության իրավական հիմքերն ավելի ուժեղ են, քան շատ այլ կիսաճանաչված կամ ճանաչված երկրներում, <https://www.panorama.am/am/news/2011/09/02/minasyan-s/896501>, 2/09/2011, (06.02.2018 թ. դրությամբ հասանելի էր):
16. Նույն տեղում:
17. Նույն տեղում:

Ամփոփում
Հայ-ադրբեջանական հակամարտությունը ադրբեջանական և հայկական
լրատվական կայքերում (մինչ ապրիլյան պատերազմը)
Մարինե Գևորգյան

Հոդվածում ուսումնասիրության առարկա ենք դարձրել հայ-ադրբեջանական հակամարտության ներկայացվածությունը ադրբեջանական և հայկական լրատվական կայքերում: Ադրբեջանական www.day.az, azerbaijan.az, armenia.az և հայկական www.news.am, www.panorama.am կայքերում գրեթե նույն ժամանակահատվածում տեղ գտած նյութերը դնելով համեմատության մեջ՝ համոզվում ենք, որ ադրբեջանական լրատվական կայքերը փորձում են տպավորություն ստեղծել, թե ադրբեջանական ազգը դարաբաղյան հակամարտության մեջ զոհ է հանդիսանում: Նրանց նպատակների մեջ է մտնում նաև համաշխարհային հանրությանը թյուր տեղեկատվության հաղորդումը արցախյան հակամարտության վերաբերյալ: Ի հեճուկս դրան՝ հայկական լրատվական կայքերում հակամարտությանը նվիրված նյութերը զերծ են ագրեսիայից: Ինչ խոսք, կան նաև ադրբեջանական խեղաթյուրումներին ուղղված պատասխան հրապարակումներ՝ հենված զուտ պատմական փաստերի և իրողությունների վրա: Հայկական լրատվական կայքերը ճշգրտված տեղեկատվություն են ներկայացնում հակամարտության այս կամ այն ասպեկտի վերաբերյալ, և որ ամենակարևորն է հայկական հրապարակումները զերծ են մատաղ սերնդի մեջ ատելություն սերմանելուց:

РЕЗЮМЕ

Армяно-азербайджанский конфликт на азербайджанских и армянских новостных сайтах
(до апрельской войны)
Марине Геворкян

Ключевые слова: армяно-азербайджанский конфликт, Нагорный Карабах, новостные сайты, интернет, Ходжалы, дезинформация, историческое мошенничество, агрессия, территориальная целостность, право народов на самоопределение.

В статье рассматривается армяно-азербайджанский конфликт на азербайджанских и армянских новостных сайтах. Сравнивая материалы азербайджанских www.day.az, azerbaijan.az, armenia.az и армянских www.news.am, www.panorama.am сайтов, которые были опубликованы почти в том же временном периоде, убеждаемся, что азербайджанские новостные сайты пытаются создать впечатление, что в карабахском конфликте азербайджанский народ является жертвой. Их цель-дезинформировать международное общество о нагорно-карабахском конфликте. Материалы о нагорно-карабахском конфликте в армянских новостных сайтах, напротив, не содержат агрессии. Конечно, есть ответные публикации, основанные на исторических фактах и реалиях против искаженных нападок азербайджанцев. Армянские новостные сайты предоставляют корректную информацию о том или ином аспекте конфликта, и, что самое главное, армянские публикации не зарождают ненависти в умах молодого поколения.

SUMMARY

**The Armenian-Azerbaijani conflict on the Azerbaijani and Armenian news websites
(before the April war)
Marine Gevorgyan**

Keywords: *Armenian-Azerbaijani conflict, Nagorno-Karabakh, news websites, The Internet, Khojaly, misrepresented information, historical forgery, aggression, territorial integrity, the right of nations to self-determination.*

The present article focuses on the Armenian-Azerbaijani conflict on Azerbaijani and Armenian news websites. Comparing the materials of Azerbaijan's www.day.az, azerbaijan.az, armenia.az and Armenian www.news.am, www.panorama.am sites that were published almost in the same time period, we are convinced that Azerbaijani news sites are trying to create an impression, that the Azerbaijani people are a victim in the Karabakh conflict. Their main purpose is to propagate distorted information the international society about the Nagorno-Karabakh conflict. Materials about Nagorno-Karabakh conflict in the Armenian news sites, on the contrary, do not contain aggression. Of course, there are reciprocal publications based on historical facts and realities against the distorted attacks of Azerbaijan. Armenian news websites provide correct information about this or that aspect of the conflict, and, most importantly, Armenian publications do not generate hatred in the minds of the younger generation.